№ 171 ԵՐԵՔՇԱԲԹԻ 6 ՕԳՈՍՏՈՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 6 ՕԳՈՍՏՈՍԻ № 171

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք է վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ) -20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Ко, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38 Փարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ս. ԵՍԱՅԵԱՆԻ

Ընտանիքում ընդունվում են գիշերօթիկ աշակերտներ մինչև 15 տարեկան հասակը։ Կարելի է դասերի կրկնողութեամբ։ Բնակարանի հասցէն՝ Չէրքէզովսկայա փող. տ. № 3, Վօրոնցովի արձանին մօտիկ։

Դիմել պայմանների մասին ամեն օր «Մշակի» խմբագրատուն առ. ժ. 10—2։

(կ. ե.) առ. 606 3—3

ԲԺԻՇԿ

ԾՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։

Հասցէն՝ Բոլշչէվսկայա № 1.

առ. (Ե.Հ.Կ.) 4. 100—85

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մենք հաղորդել էինք, որ մեծ պետութիւնների Կ. Պոլսի դեսպանական յանձնաժողովը նկատի է առել ռուսական դեսպանատան առաջին թարգման Մանդէլշտամի մշակած ծրագիրը հայկական բարենորոգումների մասին՝ մտցնելով այդ ծրագրում կարեւոր փոփոխութիւններ։

Ստացված նորագոյն տեղեկութիւններից երեւում է այժմ, որ նոյն յանձնաժողովը Մանդէլշտամի ծրագրից յետոյ՝ ձեռնարկել է ուսումնասիրելու Բ. Դրան կազմած բարեկարգական ծրագիրը։

Դրանից յետոյ՝ մեծ պետութիւնների դեսպանները կարեւոր են համարել մի նիստ գումարել՝ խորհրդակցելու համար այն միջոցների մասին, որոնց պէտք է դիմել՝ եթէ Բ. Դուռը չը կամենայ գործադրութեան դնել մեծ պետութիւնների Կ. Պոլսի ներկայացուցիչների հաւանութիւնն ստացած հայկական բարենորոգումների ծրագիրը։

—

Դիարբեքիրից յուլիսի 3-ից պաշտօնապէս գրում են Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, թէ Սիլվանի շրջանի Հաշտեր գիւղի շինականներից 60-ամեայ մէկը, Խաչօ Ղազարեան, իր գիւղից հազիւ 5 րոպէ հեռուն գտնվող արտում գիշերանց աշխատած միջոցին գնդակահարվել է մերձակայ Հաջի-Թաշ կոչված գիւղի քիւրդերի ձեռքով։

—

Բիթլիսի վիլայէթի Մոտկան վայրից յուլիսի 17-ին հետեւեալն են հեռագրել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին։ Հեռագրին ստորագրել են ինչպէս հայեր, այնպէս և թիւրքեր.

«Ղարզան գաւառակի լերան կողմի անդորրութիւնը վրդովող հանրածանօթ աւազակ Ալի Իւնիս օղլու Մուամմէր, եղբայրներն ու արբանեակները գաւառակի կեդրոնին մէջ չարաչար կերպով իրենց տան մէջ սպաննեցին միլլիքեանցի վաճառական Գասպարը և իր կինը։ Թէպէտ զինուորական ուժ ղրկուեցաւ անոնց վրայ, սակայն կարելի չեղաւ զանոնք ձերբակալել։ Հիմա քրիստոնեայ ժողովուրդը, Մօլլա օղլու Աբդուլլահի բռնութիւններէն ստիպուած է այս ու այն կողմը ցրուիլ։ Այս մարդասպանները փախստական եղած միջոցնին իսկ Հանրային Պարտուց վարչութեան մէջ իբր քօլճի կը ծառայէն և ամսական կը ստանան։ Ասոր խելք չկրցանք հասցնել։ Ասոնք ցորչափ քօլճիի պաշտօն կը վարեն ու կը գտնուին իրենց ազգականներէն ժանդարմայի չավուշ Մուհամմէդ Էմինի պաշտպանութեան ներքև, չենք գիտեր թէ ինչ կերպով պիտի կրնան ձերբակալուիլ։ Կը պահանջենք ու կը խնդրենք մինչև մեր վերջին շունչը, որ մեր կեանքն ու ինչքը ապահովութեան ներքև առնուի»։

—

Անգլիական համայնքների պալատում պատգամաւոր Էնիրկն Բրայսի ուղղած մի հարցապնդմանը պատասխանելով՝ արտաքին գործերի մինիստրի օգնական Էկլէնդը յայտնել է, թէ Ասիական Թիւրքիայի գաւառներում անգլիացի օֆիցերներ նշանակելու մասին Թիւրքիայի ու Անգլիայի միջև տեղի ունեցած բանակցութիւններն ընդհատվել են, նկատելով որ բարենորոգումների խնդիրը ուշադրութեան է առնված մեծ պետութիւնների Կ. Պոլսի ներկայացուցիչների կողմից։

—

«Daily Teleg.»-ի Կ. Պոլսի թղթակիցը յուլիսի 24-ից հեռագրում է իր թերթին հետեւեալը.

«Ինչպէս յիշում էք, հայկական բարենորոգումների խնդրին ձեռնարկվել էր վեց մեծ պետութիւնների դեսպանների կողմից, որոնց ներկայացուցիչներն ամեն շաբաթ նիստ են գումարում Ենի-քէօյում՝ դեսպանական մարմնի աւագ անդամ աւստրիական դեսպանի պաշտօնատան մէջ։

«Հաւաստի աղբիւրից ստացված տեղեկութեան համաձայն՝ այդ յանձնաժողովը դադարեցրել է իր խորհրդակցութիւնները։

«Ինչպէս յուլիսի սկզբին հեռագրեցի, Ռուսաստանը ներկայացրել է մի ծրագիր, որ նմանում է 1895 թւին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից ներկայացված ծրագրին և որի մէջ առաջարկվում է բարձր մի կոմիսար պաշտօնի կոչել՝ մեծ պետութիւնների հաւանութեամբ։

«Այդ ծրագրի շուրջը կարելի չէ եղել համաձայնութիւն կայացնել, որովհետև Գերմանիան յայտարարել է, թէ ինքը յարմար չէ համարում ոչ բարձր կոմիսարութեան ստեղծումը՝ պետութիւնների հաւանութեամբ, ոչ էլ հա- [illegible] մանազծում»։

Այս հեռագրի վերջին հատուածի առիթով հարկ ենք համարում յայտնել, որ, ի վերջոյ, համաձայնութիւնը կայացել է և յանձնաժողովը լրացրել է իր պաշտօնը։

—

Անգլիական քաղաքական շրջաններում երկիւղ են կրում, որ թիւրքերը նկատի առնելով Ռուսաստանի բռնած դիրքը Ադրիանուպօլսի և Կավալայի հարցում առաջ կը բերեն պատերազմ Հայաստանում և առիթ կը տան Գերմանիային միջամտելու։

Ուրիշ խօսքով՝ թիւրքերը կը ստեղծեն այդպիսով եւրոպական պատերազմ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 և 4 օգոստոսի

Կ. Պոլիս.—Կոմիտէտը գաւառներում կազմակերպում է միտինգներ, պահանջելով թողնել Ադրիանուպօլիսը Թիւրքիայի ձեռքում։ Մահմեդականները անտարբեր են վերաբերվում դէպի միտինգները. միայն յոյներն են հետաքրքրութիւն ցոյց տալիս։

—

Սօֆիա.—Մելնիկեան շրջանում Նեվրոկօպի շուրջը գտնվող յունական գլխաւոր ուժերը նահանջում են դէպի Դրամայի կողմը։

Գլխաւոր բանակի ստացած տեղեկութիւնների համաձայն՝ թիւրքերի առաջապահակները Մուստաֆա-փաշայում օգնական ուժեր են ստանում։ Թիւրքերը առանց որևէ պատճառի գնդակ են արձակում բօլգարական պահակների վրա։ Զօրքերի խոշոր մասը խմբված է Ադրիանուպօլսի շուրջը։ Թիւրքերը շրջակայքից անցնում են դէպի հարաւ և հաւաքում հունձը նրանց դաշտերից, որոնց տէրերը փախել են։

—

Սօֆիա. — Կառավարութիւնը մեծ պետութիւնների դեսպանութիւններին ներկայացրել է յայտագիր, յայտնելով որ թիւրքաց զօրքը յոյներից դատարկված շրջանների ազգաբնակութիւնը պաշտպանելու պատրուակով գրաւեց Մուստաֆա փաշան, Դիմօտեկան և Սօֆլին, առաջ գնաց մինչև կավակը Մարիցայից 70 կիլոմետրաչափ դէպի արեւմուտք և այժմս էլ գնում է դէպի Կիրջալի և Գիւմիւլջինա։ Բօլգարական յայտագիրը ուշադրութիւն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ թիւրքերը գրաւում են այդ շրջանները առաջ՝ քան բօլգարները կարող էին գրաւել նրանց։ Բուխարեստի դաշնագիրը պարտաւորեցնում է Բօլգարիային արձակել իր զօրքերը, ուստի անարդարութիւն է թոյլ տալ, որ թիւրքերը անպատիժ կերպով խախտեն Լօնդօնի հաշտութեան հիմնական պայմանները և ներս խուժեն մի պետութեան սահմանները, որը դեռ հէնց նոր ցած դրեց իր զէնքը։ Բօլգարական կառավարութիւնը յուսով է, որ պետութիւնները միջոց կը գտնեն արգելելու օսմանեան զօրքին անցնելու Էնոս-Միդիայի գիծը, ապա թէ ոչ նրանց առաջխաղացութիւնը բացի բօլգարների հետ ընդհարվելու վտանգից՝ կարող է նոր լուրջ դժուարութիւններ ստեղծել խաղաղութեան գործի և արդարութեան համար, որը յանձն են առել մեծ պետութիւնները։

—

Սօֆիա.—Օգոստոսի 2-ի առաւօտեան եկան Սօֆիայի զօրաբանակի զօրքերը։ Ազգաբնակութիւնը առաւօտւանից պատրաստութիւն է տեսնում ընդունելութիւն ցոյց տալու։ Տները զարդարված են գիրլեանդներով ու դրօշակներով, պատշգամբներում և լուսամուտների առաջ խմբվել էին բազմաթիւ հանդիսականներ։ Զօրքերի մուտքը սկսվեց ժամը 9-ից և տևեց մինչև ժամը 3-ը։ Առջևից ձիու վրա նստած գնում էր Ֆերդինանդ թագաւորը։ Երկու արքայորդիներն էլ զօրքի շարքերումն էին։ Յաղթական կամարի մօտ մունիցիպալիտէտի անդամներն և հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչները ողջունեցին զօրքերին։ Դպրոցական աշակերտները նուագում էին ազգային օրհներգը։ Զօրքերի աշխուժ տեսքը ուժեղ տպաւորութիւն էր գործում։ Զօրքերի անցնելուց յետոյ մայր տաճարում մաղթանք կատարվեց Ֆերդինանդ թագաւորի գահ բարձրանալու տարեդարձի առիթով։ Հրապարակի վրա հաւաքված ժողովրդի բազմութիւնը ջերմ կերպով ողջունեց Ֆերդինանդ թագաւորին, արքայորդիներին և գեներալ Դիմիտրիեւին։

—

Վիեննա. —Սկուտարից հաղորդում են, որ Խոտի, Գրուդէի, Կլեմէնտի, Կաստրատի և Շկրելի ցեղերի պետերը ամբողջ կազմով ներկայացան անգլիական ծովապետ Բեռնէյին և յայտնեցին, որ Մալէսիի ցեղերը չեն ընդունում դեսպանական կոնֆերէնցիայի որոշած սահմանները։ Եթէ մեծ պետութիւնները ուշադրութիւն չեն դարձնի ալբանացիների յուշագրի մէջ շեշտուած գանգատների վրա, պատերազմը մալիսօրների ու Չերնոգորիայի միջև անխուսափելի է։ Եթէ մալիսօրները մինչև օգոստոսի 7-ը չը ստանան իրանց յուշագրին դրական պատասխան, նրանք կը շարժվեն դէպի Տուզա։ Նոյնանման յայտարարութիւններ նրանք արել են Աւստրո-Ունգարիայի և Իտալիայի գլխաւոր հիւպատոսներին։ Ծովապետն ու հիւպատոսները պատասխանել են, որ այդ յայտարարութեան մասին կը հաղորդեն իրանց կառավարութիւններին։

—

Վիեննա.—Այստեղ եկած ադրիանուպօլսեան պատուիրակութիւնը ուժեղացված է մի քանի հոգով։ Պատուիրակութիւնը բաժանվել է երկու խմբի, որպէսզի շուտ այցելի եւրոպական մայրաքաղաքները։ Առաջին խումբը մեկնեց Պետերբուրգ, երկրորդը վաղը ուղևորվում է Լօնդօն։

—

Վիեննա. — Եկաւ Ադրիանուպօլսի թիւրքական պատգամաւորութիւնը։

Բէլգրադ.—Օգոստոսի 3-ին շոգենաւով եկան Սերբիայի, Յունաստանի և Չերնոգորիայի մինիստր-նախագահները. նրանց դիմաւորեցին կառավարութեան անդամները, սկուպշչինայի նախագահը, յունական և ռումինական դեսպանները, նոյնպէս և զինուորական ու քաղաքացիական բարձր իշխանութիւնները։ Բէլգրադի քաղաքագլուխը ողջունեց եկողներին։ Մինիստր-նախագահների պատասխան-ճառերը աղմկալի ծափահարութիւններ առաջ բերին դիմաւորողների մէջ։ Վէնիզէլօսը ունկնդրութեան է ընդունվել թագաւորի մօտ։ Ի պատիւ Պաշիչի պալատում հանդիսաւոր ճաշկերոյթ տրվեց։

—

Բէլգրադ.—Զինուորական մինիստրին ուղղված արքայական ուկազով առաջարկված է վեց շաբաթով պահեստի զինուորներին զէնքի կանչել նուաճված երկիրներում պահնորդական ծառայութիւն վարելու համար, մինչև նորակոչների գումարումը։

—

Բեռլին.—Ֆրանսիական լրագիրները գերմանական քաղաքականութեան ղեկավարներին և առանձնապէս անձամբ կայսրին վերագրում են եռանդուն գործունէութիւն Ադրիանուպօլսի հարցում։ Լաւատեղեակ աղբիւրներում Պետ. Հեռ. Գործ. թղթակցին ասել են, որ լրագրական ենթադրութիւնները չեն համապատասխանում ճշմարտութեանը։ Բ. Դրանը դիպլօմատիական խորհուրդ տալու հարցում Գերմանիան գործում է միացեալ պետութիւնների հետ միատեղ, ըստ որում նա յարում է այն պետութիւններին, որոնք ներկայ գործում աւելի զսպված են իրանց պահում։

—

Աթէնք.—Հրատարակված է թագաւորական ուկազ, որով հաստատվում է 10 միլիօն ֆրանկի փոխառութիւնը յունական ազգային բանկի միջոցով։

Թագաւորը հեռագրել է, որ Աթէնք կը վերադառնայ երկուշաբթի։

Զէնքի կանչված զօրքերը արձակելու հարցը կը վճռվի թագաւորի և Վէնիզէլօսի վերադարձից յետոյ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒ ՆՈՐ ՊԱՏԿԵՐԸ

Չը նայելով որ Բուխարեստի հաշտութիւնը կայացնելուց յետոյ դեռ էս մնում են չը լուծված Ադրիանուպօլսի, Կըրք-Քիլիսէի, Ալբանիայի հարաւային սահմանի ու Եգէյեան կղզիների հարցերը, այնուամենայնիւ Բալկանեան թերակղզու քարտէզը նոր բաժանումներով, մօտաւորապէս, պարզվում է արդէն։ Այդ քարտէզը ներկայանում է հետեւեալ կերպարանքով.

Թիւրքիայի ձեռքում նրա եւրոպական երկիրներից (170,000 քառ. կիլոմետր տարածութեամբ և 6 միլիոն ազգաբնակութեամբ) այսօր մնում է Կ. Պոլսից բացի, էլի Ադրիանուպօլսի վիլայէթի մի մասը 15,000 քառ. կիլոմ. տարածութեամբ. ընդամենը 20,000 քառ. կիլոմ. տարածութիւն, 1.400.000 բնակիչներով (հաշւելով նաև Պոլիսը)։

Բօլգարիան, Սերբիայի և Յունաստանի օգտին հարկադրաբար զիջած շրջաններից բացի, ստանում է 40,000 քառ. կիլոմետր տարածութիւն, 1.060.000 բնակիչներով։ Դօբրուջի շրջանը դուրս գալուց յետոյ, որը անցնում է Ռումինիային, Բօլգարիայի ամբողջ տարածութիւնը կունենայ 33,000 քառ. կիլոմ. և 800,000 բնակիչ աւելի, քան մինչև առաջին բալկանեան պատերազմն ունէր։

Սերբիան ստանում է Կոսսովայի վիլայէթի խոշոր մասը 18,000 քառ. կիլ. տարածութեամբ և 620,000 բնակիչներով. Մօնաստիրի վիլայէթի մի մասը (9000 քառ. կիլ., 320,000 բնակիչ) և 5000 քառ. կիլ. Սալօնիկի վիլայէթից 170,000 բնակիչներով։ Ընդամենը 32,000 քառ. կիլ. տարածութիւն՝ 1.110.000 բնակիչներով։

Չերնոգորիան ստանում է Նովօ-Բազարի [illegible] երևի, նաև Իփեկն ու Դիակօվօն և Սկիւտարի վիլայէթի ուղղված սահմանը։ Ընդամենը 7000 քառ. կիլ. տարածութիւն և 230,000 բնակիչ։

Յունաստանը ստանում է Կրետէ կղզին, Էպիրոսի շրջանը, Հարաւային Մակեդոնիայի մի մասը, Սալօնիկը իր շրջանով և Սերեսը, Դրաման ու Կավալան։ Ընդամենը՝ 45,000 քառ. կիլ. տարածութիւն 1.520.000 բնակիչներով։ Դրանից բացի նաև Եգէյեան կղզիների մեծ մասը։

Ալբանիայի նոր իշխանութիւնը կը կազմվի նախկին Սկիւտարի վիլայէթի ամենախոշոր մասից, Եանինայի վիլայէթի հիւսիսային կէսից և Մօնաստիրի ու Կոսսովայի մասերից. բռնելով ընդամենը 32,000 քառ. կիլոմ. տարածութիւն 880,000 բնակիչներով։

Մեծացրած տեսքով բալկանեան պետութիւնները կունենան մօտաւորապէս հետեւեալ չափերը. Ռումինիան՝ 138,000 քառ. կիլ. տարածութիւն և 6.260.000 բնակիչ (առաջ 131,000 քառ. կիլ. և 6.000.000 բնակիչ), Բօլգարիան՝ 139,000 քառ. կիլոմ. և 4.600.000 բնակիչ (առաջ 96,000 քառ. կիլ. 3.800,000 բնակիչ), Սերբիան՝ 80,000 քառ. կիլ. և 3.600.000 բնակիչ (առաջ 48,000 քառ. կիլ. և 2,5 միլ. բնակիչ), Յունաստանը՝ 110,000 քառ. կիլ. և 4 միլիօնից աւելի բնակիչ (առաջ 65,000 քառ. կիլ. և 2,5 միլ. բնակիչ), Չերնոգորիան՝ 16,000 քառ. կիլ. և 480,000 բնակիչ (առաջ 9000 քառ. կիլ. և 250,000 բնակիչ)։

Անհամեմատ ամենից աւելի շահել է Յունաստանը, իսկ համեմատաբար՝ Չերնոգորիան, որը կրկնակի մեծանում է թէ տարածութեամբ և թէ ազգաբնակութեամբ։ Բայց և այնպէս, Չերնոգորիան երկու անգամ դարձեալ փոքր է տարածութեամբ և ազգաբնակութեամբ, քան Ալբանիայի նոր իշխանութիւնը։

Խոշոր քաղաքներից և ամենամարդաշատ տեղերից անցնում են Ռումինիայի ձեռքը՝ Սիլիստրիան, Դօբրիչը, Բալչիկը և Տուրտուկայը, Բօլգարիայի ձեռքը՝ Դիմօտեկան, Դէդէաղաչը, Պորտ-Լագօսը, Մելնիկը, Նեվրոկօպը, Պեչէվօն, Ստրումիցան, Կսանտին, Գիւմիւլջինան և Էգրի-Պալանկան։ Ադրիանուպօլիսն ու Կըրք-Քիլիսէն մնում են վիճելի։ Սերբիային անցնում է՝ Նովօ-Բազարը, Պրիշտինան, Միտրօվիցան, Պրիզրէնը, Կօչանին, Ռադօվիշտէն, Կումանօվօն, Իշտիբը, Քէօփրիւլին, Պրիլէպը, Օխրիդան, Մօնաստիրը և Դիբրան։ Յունաստանին՝ Սալօնիկը, Սերեսը, Դրաման, Կավալան, Դէմիր-Հիսարը, Վօդէնան, Եանինան, Կանդիան, Կանէան։ Չերնոգորիային՝ Բէրանին, Պլաւան, Գուսինիան, Իփեկը։ Մնում են առ այժմ կասկածելի Պլեվլէն, Ռօզաին և Դիակօվօն։ Ալբանիայի կազմի մէջ կը մտնեն՝ Սկիւտարը, Ալեսսիօն, Դուրացցօն, Տիրանան, Էլբասանը, Բէրութը, Վալօնան և Կորիցան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 և 4 օգոստոսի

Կիէվ.—Երեկոյեան ժամը 9-ին Լուկիանովեան էլէկտրաքարշի գծի վրա, երբ մի պահակի ու մի քաղաքապահի օգնութեամբ փորձ էին անում հասարակութեամբ լցված վագոնի մէջ կալանաւորել չորս կասկածելի մարդկանց, վերջիններս գնդակաձգութիւն սկսեցին. պահակը սպանված է, քաղաքապահը վիրաւորված է երեսից։ Չարագործներից մէկը վիրաւորվել է և բռնվել, մնացեալները անյայտացել են։

—

Արդահան.—Թիւրքիայի սահմանից 9 աւազակներ անցել են Օլթիի շրջանը։ Քեօր-Օղլու հին բերդում ոստիկանական պահակները պաշարել են նրանց։ Երկարատև հրացանաձգութիւնից յետոյ սպանվել են 6 հոգի, մէկը վիրաւորված է։ Խլել են նրանցից 5 հրացան և մեծ քանակութեամբ փամփուշտներ։ Սպանված են պահակների ձիերից 3-ը և 2 էլ վիրաւորվել։

Իշլ.—Արտաքին գործերի մինիստր կոմս Բերխտոլդը ընդունվեց կայսրի մօտ մէկ ու կէս ժամ ունկնդրութեան ընթացիկ գործերի վերաբերմամբ զեկուցանելու համար։

Կ. Պոլիս.—Ռուսաց «Ռոստիսլաւ» և «Կագուլ» նաւերը մտան Սև ծով։

Ցէուտա.—Մարօկկօցիները յարձակում գործեցին մթերատար զօրամասի վրա։ Սպանեցին 6 հոգու, վիրաւորեցին 17 հոգու։ Տէտուանից օգնութեան եկած հեծելազօրի պահակները ցրեցին թշնամուն։

Կադիկս.—Մարօկկօցիները Ալգուսէմասի ափին կողոպտեցին սպանական մի առևտրական նաւ։ Օգնութեան հասած պահակամակոյկը ստիպված էր ջրասոյզ անել նաւը։

Րիմավսկայա Սօբօտա (Ունգարիա).—Երկարատև յորդ անձրևների շնորհիւ Շայավա և Րիմավա գետերը դուրս եկան իրանց ափերից և հեղեղեցին հովիտը։ Ջուրը փչացրեց երկաթուղային թումբը և կամուրջը։ Վերջինս քանդվեց։ Տասն հոգի ցած ընկան կամուրջից, վեցը ծանր վիրաւորված են, նրանցից մէկը մեռաւ. չորս հոգի ջրասոյզ եղան։

Սէրայէվօ.—Բօսնիայի Հիւսիս-Արևելքում գտնվող Ամբրուցկա քաղաքը և Օստրալուկա աւանը վտանգված են խօլերայից։ Վերջինում մեռել են 4 հոգի։

Սվանզի.—Սկսվեց ընդհանուր գործադուլ նաւաշինարանի բանւորների։

Լօնդօն.—Սուֆրաժիստուհիները վառեցին Գօլֆի հրապարակը և Բէչվարդեան այգում հրդեհեցին խոտի դէզը։

Բերլին.—«Նորդ-Դէյտշէն» հաստատում է այն լուրը, որ Գերմանիան հրաժարվում է մասնակցել Սան-Ֆրանցիսկօյի համաշխարհային ցուցահանդէսին։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 օգոստոսի

Շանխայ.—Նանկինում պատերազմը շարունակվում է։ Ամրութիւնները գրաւել են ապստամբները։ Հիւսիսային զօրքերի հրամանատար գեն. Ջժանսունը ռմբակոծում է ապստամբների ամրութիւններն ու բանակատեղը։ Հաղորդում են, որ Վուզունի ամրութիւնները անձնատուր եղան պաշտպաններին 150,000 դօլլար վճարելուց յետոյ։ Ստացված տեղեկութիւնների համաձայն դրութիւնը վատթարացաւ։

Տօկիօ.—Որովհետև դժուարութիւններ է զգում եապօնական ոստիկանութիւնը Հարաւային Չինաստանից եկած փախստականներին պահպանելու գործում, կառավարութիւնը, ինչպէս ասում են, մտադիր է առաջարկել Պեկինի կառավարութեանը փոխել Սունեատսէնին և Խուանսինին սպանելու համար դրամական վարձատրութիւն տալու խոստումը։

Տօկիօ.—Եկաւ Խուանսինը։ Լրագիրների ասելով՝ Հավայեան կղզիների վրա ապրող եապօնացիները դժգոհ են ֆինանսիստ Սօյէդզօյի Հօնոլուլույում արտասանած ճառից։ Սօէդզօն շեշտում էր, որ Եապօնիան տնտեսական նկատումներով չի կարող պատերազմել Ամերիկայի հետ։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 29 յուլիսի

Խօյի և Սալմաստի սահմաններում քիւրդ ցեղերի հակառուս շարժումը զսպվեց ըստ արժանւոյն, չը նայած բաւականին վրդովմունք էր պատճառել ազգաբնակութեան։ Շնորհիւ ռուսաց զօրքի ներկայութեան՝ ամենուրեք Ատրպատականում հանգիստ է և խաղաղ։

Ցայտնի Քեարիմ-խանի դատը յանձնվել է միջնորդ դատարանի. արդէն իր պարտքը 40,000 թումանի հարցը վերջացել է, այժմ մնում է, որ դատարանը ձգէ Քեարիմ-խանի պահանջը հայերից։ Ինչպէս լսեցի, Քեարիմը 4 տարվայ տուրք է միայն ուզելու, որը մեծ գումար չէ բանելու։ Երեք-չորս օր յետոյ վերջին ժողովը տեղի կունենայ, և դրութիւնը կը պարզվի ըստ ամենայնի։

Ղարաման-խանի ցուցումներով առաջնորդարանը բողոքել էր 3-4 խաների համար իբրև կեղեքիչների. դրանցից երկուսը Ահարում բանված են և շուտով կը բերվեն Թաւրիզ։

«Մշակի» № 161-ում Թաւրիզից տրված լուրերը սխալ են։ Թաւրիզում խօլերային [illegible] տարվայ տաքութիւնն անսովոր է եղել՝ հասնում մինչև 45°։ Եղբարք Սէյլանօվների Թաւրիզի ծխախոտի բաժանմունքում ոչ մի ժամանակ հրդեհ չէ տեղի ունեցել։

Այս տարի պտուղների և խաղողի բերքը շատ առատ է. առատ է նաև նուշի և հացահատիկի բերքը. այնուամենայնիւ ամեն բանի արժէքը շատ թանգ է և յոյս չը կայ, որ էժանութիւն տիրէ ի նպաստ չքաւոր հասարակութեան։ Հայկ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՂԱԾ ՎԵՐՋԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

I

Ինչպէս յայտնի է, մի քանի ժամանակ առաջ Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը մի շրջաբերական հրատարակեց, որով առաջարկում էր հայոց թեմի եկեղեցական-ծխական դպրոցների բոլոր հոգաբարձութիւններին, որ «այսուհետև նոր ուսուցիչ հրաւիրելու դէպքում պէտք է կանխապէս յայտնեն իրան՝ ուղարկելով ուսուցչացուի բոլոր փաստաթղթերը, որպէսզի ինքն ևս իր կողմից յայտնէ պաշտօնաւոր մարմնաւոր իշխանութեան։ Փաստաթղթերը ներկայացնելու հետ պէտք է յայտնել նաև ուսուցչացուի անունը, հայրանունը և ազգանունը, հասակը, կոչումը, ծագումը (գիւղ, քաղաք, գաւառ, նահանգ), մանրամասն հասցէն և թէ վերջին ութ տարվայ ընթացքում որտեղ է պաշտօնավարել և ինչ գործով է զբաղվել»։

Այս շրջաբերականը առ հասարակ և յատկապէս մեր ընդգծած «փաստաթղթեր» և «վերջին 8 տարվայ ընթացքում» խօսքերն իրարանցումն են առաջ բերում ուսուցիչների և հոգաբարձութիւնների մէջ, ենթադրել տալով թէ փաստաթղթերի մէջ պէտք է հասկանալ և քաղաքական բարեյուսութեան վկայական, որը ստանալը, ինչպէս գիտենք, շատ դժուար և երկարատև գործ է, մանաւանդ գաւառներում։ Իսկ մի քանի հոգաբարձութիւններ այնքան առաջ են գնացել, որ սկսել են նոյնիսկ իրանք պահանջել ուսուցիչներից քաղաքական բարեյուսութեան վկայական։

Հիմք ընդունելով Մեսրոպ եպիսկոպոսի այդ շրջաբերականը՝ «Հօրիզօն» թերթը սկսեց աղմուկ հանել և մի քանի առաջնորդողներով բողոքել այդ կարգադրութեան դէմ, որ արդիւնք է կառավարութեան կողմից եղած պահանջի, տեսնելով այդ պահանջի և կարգադրութեան մէջ ոտնձգութիւն և ձեռնամխութիւն հայոց եկեղ. ծխական դպրոցների ատոնոմ իրաւունքների։

Եւ յարուցանելով այդ աղմուկը, «Հօրիզօն» թերթը սկսեց պախարակել Էջմիածինը, Ամենայն Հայոց Կաթողիկոսին, սաստիկ յարձակվել նրանց վրա, մեղադրելով անհոգութեան, անփութութեան մէջ, որ ոչ մի միջոց ձեռք չառան նոր կարգադրութիւնը վերացնելու դէմ, չը բողոքեցին, այլ անմռունչ հպատակեցին նրան։ Սակայն այդ խիստ յարձակումների արանքում «Հօրիզօնը» աշխատում էր մեկուսացնել Մեսրոպ եպիսկոպոսին, ազատ համարել նրան որևէ պատասխանատուութիւնից և դուրս բերել նրան իբրև քողարկվին մի բէխաբար (անգէտ) անձի, որ ոչ մի տեղեկութիւն չէ ունեցել եղած կարգադրութեան մասին և այժմ միայն ստիպված կատարում է այդ ապօրէն կարգադրութիւնը, իբրև ստորադրեալ, որ պարտաւոր է իր իշխանաւորի կարգադրութիւնը կատարել։ Միակ յանցաւորը և պատասխանատուն «Հօրիզօնը» ցոյց էր տալիս Էջմիածնի բարձր իշխանութիւնը՝ Սինոդը և Կաթողիկոսին։

«Մշակը» լուռ մնաց այդ հարցի և յարուցված աղմուկի մասին ոչ թէ նրա համար, որ համարում է հարցը աննշան, այլ որովհետև փորձառութեամբ գիտէր, որ «Հօրիզօնը» ղեկավարվում է շարունակ ոչ թէ սկզբունքային, գաղափարական տեսակէտներով, այլ անձնական և նեղ կուսակցական մտումներով, ուստի և յաճախ այդ նպատակով յեղաշրջում և աղաւաղում է փաստերը յօգուտ կամ ի վնաս այն հաստատութեան կամ անձի, որին կամենում է պախարակել կամ գովել իր կուսակցական շահերի համար։ Այդ պատճառով «Մշակը» լաւագոյն համարեց առժամանակ լռել մինչև ձեռք կը բերի խնդրի մասին ստոյգ և հաւաստի տեղեկութիւններ, օբեկտիվ փաստեր։ «Մշակը» բաւականացաւ միայն ընդգծելով «Հօրիզօնի» շատ ափ-աշխարա տենդենցը՝ չքմեղութեան պատմուճանով սքողել Մեսրոպ եպիսկոպոսին։

Այժմ մեր ձեռքի տակ ունենալով ստոյգ և պաշտօնական տեղեկութիւններ ու փաստեր, մենք կամենում ենք լուսաբանել խնդիրը այնպէս, ինչպէս նա կայ, ինչպէս ծնվել է, և ցոյց տալ ամենի կատարած դերը և պատասխանատուութեան բաժինը այդ խնդրի մէջ։

Այդ փաստերը, անպայման, մեզ կը բերեն այն եզրակացութեան, որ 1) «Հօրիզօնի» ըմբիշների և նրանց տակից այժմ քեօսա-գեալղների դեր կատարող «Բագուի Ձայն» և «Կովկասի Լրաբեր» թերթերի յարուցած աղմուկը Էջմիածնի դէմ բղխում է ոչ թէ սկզբունքային, գաղափարական նկատումներից, այլ զուտ կուսակցական մտումներից, 2) Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարել է այն ամենը, ինչ որ հնարաւոր էր և պարտաւոր էր կատարել նոր կարգադրութիւնը չը գործադրելու համար, 3) բարոյական պատասխանատուութիւնը ներկայ գործի մէջ, եթէ կայ պատասխանատուութիւն, ամենից շատ ծանրանում է Մեսրոպ եպիսկոպոսի վրա, 4) Մեսրոպ եպիսկոպոսի շրջաբերականը իր անտեղի և աւելորդ պարբերութիւններով զուր տեղ առթել է իրարանցում։

Բայց նախ քան այդ փաստերին անցնելը, որևէ թիւրիմացութեան առիթ չը տալու համար, պարտք ենք համարում յայտնել, որ մենք բնաւ կողմնակից և ջատագով չենք նոր կարգադրութեան, որ, մեր կարծիքով, աւելորդ ձևականութիւն է, շարունակ շփոթութիւններ առաջ կարող է բերել մտքերի մէջ և դժուարութիւններ ստեղծել կրթական գործի մէջ։ Բայց և միւս կողմից, մենք գտնում ենք, որ այդ կարգադրութիւնը, չունենալով էական և հիմնական նշանակութիւն, չէ կազմում այնպիսի մի կարևոր հարց, որի համար Ամենայն Հայոց Կաթողիկոսը պարտաւոր զգար իրան լարել իր յարաբերութիւնները բարձր կառավարութեան հետ մի այնպիսի ժամանակ, երբ մի մեծ և կենսական հարց—հայկական հարցը—հրամայողական պահանջ է դնում, որ հայոց եկեղեցու պետը ամենալաւ յարաբերութիւններ մշակէ ռուսաց բարձր կառավարութեան հետ։

Միայն կուսակցական կրքերից կուրացածները կարող են պահանջել, որ համեմատաբար մի անկարևոր հարցի համար մարդիկ կտրատեն իրանց բոլոր նիզակները․․․ Հ. Ա.

ՂԱՐԱԲԱՂԻ ԹՍ. ԴՊՐՈՑԻ 75-ԱՄԵԱՑ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

[illegible]

Թիֆլիսաբնակ ղարաբաղցիները Գրական-Գեղարւեստական Սալօնում խորհրդակցութիւն կազմելուց յետոյ յուլիսի 19-ին՝ որոշեցին 12 հոգուց մի պատգամաւորութեան միջոցով իրանց շնորհաւորութիւնները ու խնդակցութիւնն արտայայտել յոբելեար դպրանոցին և ուղարկել նրա 75-ամեայ պսակին «խոնչա», այն է՝ դպրանոցի դահլիճի համար

1) Նկարիչ Գ. Բաշինջաղեանի նշանաւոր «Ներսէսի լիճը» Խրիմեան Հայրիկի գրով.

2) Ղարաբաղցի տաղանդաւոր անդրիագործ Մ. Միքայէլեանի նշանաւոր գործերից՝ Թիֆլիսի կինտօ (Պէպօ).

3) Հ. Ղ. Ալիշանի «Այրարատը» փառակազմ դրք. գրադարանի համար.

4) Գեղանկար ուղերձ, շրջանակի մէջ։

5) Դպրանոցի յոբելեանը նախաձեռնող ու նրան համգամակութեան գործում աջակից Զալէն և Բարզէն վարդապետներին խալաթ (նուէր) իրանց մեծադիր պատկերները պատշաճ շրջանակների մէջ։ («Տարազ»)

Չորեքշաբթի, երեկ. ժամը 6-ին, Թիֆլիսաբնակ ղարաբաղցիների պատգամաւորութիւնը ճանապարհվում է Շուշի։ Եւլախ կը հասնի գիշերվայ ժամը 1-ին։ Նրանք, որոնք կամենում են ունենալ յարմարութիւններ ճանապարհին, խնդրվում է մինչև չորեքշաբթի կէսօր յայտնել իրանց որոշումը՝ նոյն 6 ժամին ճանապարհ ընկնելու, որպէսզի առանց ուշանալու Եւլախից իսկոյն ուղի ընկնեն։

Եւլախ գնացողները Սիմէօն-բէկ Մելիք-Կարագեօզեանի գրասենեակին ևս կարող են դիմել, ուր նրանց կը տրվի ամեն աջակցութիւն։

Իսկ Թիֆլիսի կրթական, կուլտուրական, հասարակ. հաստատութիւններից Շուշի գնացող պատգամաւորները հրաւիրվում են դիմել Թիֆլիսաբնակ ղարաբաղցիների պատգամաւորութեան, որոնք ճանապարհին ամեն դիւրութիւններ կը տան ցանկալի հիւր պատգամաւորներին։

Տ. Նազարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ընթացիկ կեանք

Հին-Նախիջևան, 28 յուլիսի

Յուլիսի 24—26-ին Հին-Նախիջևանում և շրջակայ գիւղերում ամբողջ օրերով շարունակ փչում էր հարաւային տաք քամի, որը բացի այն, որ նեղում, դժուարացնում էր մարդու շնչառութիւնը, փոշով, աւազով լցնելով աչքերը՝ զանազան հիւանդութիւններ, մանաւանդ աչքացաւ, փորհարինք, առաջ բերելով երեխաների շրջանում, և զգալի կերպով ազդեց ամբողջ բուսականութեան վրա։

Երեքօրեայ փչող տաք քամին հասարակ ու պտղատու ծառերի տերևները ամեն տեղ սևացրել կամ չորացրել է. փոշու հաստ շերտով ծածկվել են ծառերի, ծաղիկների, խոտերի, այգիների ու այլ ցանքսերի և մանաւանդ բամբակի տերևները։ Մի թեթև անձրև զգալի օգուտ կը պատճառէր ներկայ հանգամանքներում։

Անապատային այդ քամին մեծ վնասներ պատճառեց բամբակատէրերին։

Աւելի աչքի է ընկնում քամու առաջացրած վնասը ջրելու ժամանակ. ջրի ողջ առուբերը ծածկվում է բամբակի թափված նօղիկներով. սակայն յուսատու մի բան կայ. այդ թափված, ոչնչացած ծաղիկները կը փոխարինվեն նորանոր ծաղիկներով, և այդ նորաբաց ծաղիկներից կը գոյանան նոր [illegible] «քալանները» կը բացվեն, պտուղ կը դառնան, եթէ աշունը նպաստաւոր լինի բամբակի բերքի համար, ոչ անձրևաբեր, այլ չորային լինի։

Հացահատիկների կալսելը վերջանալու վրա է. բերքը այնքան էլ վատ չէ, միայն ջրերի յանկարծակի կտրվելու ու այդ տարի գարնան ուշ բացվելու պատճառով հացահատիկների բոյսերը ջրից մնացին և որի պատճառով հացահատիկները նուազ մնացին և սպասված առատ պտուղը չը տուին։ Չը նայած բերքի այնքան էլ վատ չը լինելուն ու տեղ-տեղ էլ լաւ, այնուամենայնիւ գները չեն իջնում և հակառակ անցեալ տարվայ այս ժամանակների գներին, երբ ցորենի պուդը ծախվում էր 1 ր. 10 կ.-ից սկսած մինչև 1 ր. 20 կ., այս տարի պուդը 1ր. 30կ.-ից չէ իջնում ու կարող է նոյնիսկ բարձրանալ։

Խաղողի այգիների բերքը չափազանց լաւ է. գոհ է գիւղացին։ Գիւղացու ուրախութիւնը կրկնապատիկ է նրանով, որ այս տարի ազատվել է խաների, բէկերի, [illegible] ծանր լծից, իր բերքի 30-ից 4-ը նրանց անպատճառ վճարելուց, իբրև դարերով սրբագործված անարգ տուրքից։

Երկնակամարի վրա հիւսիս-արևելեան կողմից կէս գիշերից յետոյ երևան է գալիս պայծառ լուսաւոր աստղերի մի խումբ. դա «Ղուլբուղ» է կոչվում. «Ղուլբուղը» երևալուց յետոյ, օդի մէջ զգալի փոփոխութիւն է երևում. գիշերը հովերը, գիշերը զովերը…

Ա. Տէր-Ստեփանեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՇԽԱՆ ԲԱՂԴԱՍԱՐ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՄԵԾՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ-ՏՕԼԱՅ

(1775—1854)

Ղարաբաղի ազգային հոգևոր յոբելեար թեմական դպրոցի հիմնադիր Բաղդասար միտրոպոլիտը Արցախի և Սիւնիքի մինչև մեր օրերը հասած հայ իշխանական ցեղերից ամենահին Ջալալեանց ազգատոհմիցն է։ Սկզբնաւորութիւնը առնում է Բագրատունեաց նախարարութիւնից՝ Սմբատ Խոստովանողի որդի և Աշոտ I-ի եղբայր Սահլ իշխանից։ IX դարից մինչև XVII դարը Ջալալեանց տոհմը տուել է ազգին նշանաւոր իշխաններ, կաթողիկոսներ, քաջարի գործիչներ, պահել-պահպանել է Աղուանից կաթողիկոսութիւնը և նրան աւելի մեծ շուք ու հռչակ տուել, մանաւանդ երբ կաթողիկոսական աթոռը փոխադրվել է Գանձասար։ Այդ կաթողիկոսներից անուանի են եղել՝ Յովհաննէս Ա., Մատթէոս, Շմաւոն, Արիստակէս, Սարգիս Ա., Գրիգոր, Երեմիա, Եսայի, Յովհաննէս Բ. և Սարգիս Բ., որով վերացվեց XVIII դարում Աղուանից կաթողիկոսութիւնը։

Բաղդասար միտրոպոլիտը XVIII դարում նշանաւոր իշխան Մելիք-բէգ Հասան-Ջալալ-Տօլայի թոռն է։ Հայրը իշխան Դանիէլ, մայրը՝ տիկին Հռիփսիմէ։ Ծնվել է 1775 թ. յունվարի 12-ին Խաչէնի Գանձասար աւանում և մկրտվել Գանձասար վանքում։ Կնքահայրը «Ժամասաց» մականունեալ Յակոբ եպիսկոպոսն է եղել, իսկ մկրտողը՝ Տոփեանց Աթանաս եպիսկոպոսը։ Մանկութիւնը անց է կացրել Գանձասարում, ուսումն ու կրթութիւնը ստացել է իր հօրեղբայր Սարգիս արքեպիսկոպոսից (կաթողիկոսից)։ Սէր ունենալով կուսակրօնութեան, թողնում է իշխանական կենցաղը և նուիրվում Գանձասարի տաճարին, վայելելով, իր հեզաբարոյ, առաքինի բնաւորութեան շնորհիւ, ամբողջ միաբանութեան սէրն ու գգուանքը։ Աստուածային պարգև էր համարվում պատանի Բաղդասարի ձայնը, և նրա ներդաշնակ երգեցողութիւնը մեծ շուք էր տալիս եկեղեցուն։

Հազիւ տասը տարեկան էր, երբ Իբրահիմ-խանը սկսել էր տակն ու վրա անել Ղարաբաղը, և Յովհաննէս կաթողիկոսի մօտ 1785 թ. ժողովվելով հայոց Արցախի աշխարհի մելիքները՝ խնդրագիր գրեցին Եկատերինէ Կայսրուհուն՝ ռուսաց պաշտպանութիւնը հայցելով և սիրայօժար իրանց բաղդը միացնելու ռուսի հետ։

Իբրահիմ-խանը, տեղեկանալով կաթողիկոսի և մելիքների իր դէմ դաւադրութիւնը, աւելի ևս է սաստկացնում իր բռնութիւնները։ Յովհաննէս կաթողիկոսին սպանում է, կալուածքները յափշտակում, մելիքները ցաք-ցրիւ են լինում։ Սարգիս արքեպիսկոպոսը Գանձասարի հարստութիւնները թաքցնում է և իր եղբայր իշխան Դանիէլբէգի և նրա որդի Բաղդասարի (միտրոպոլիտ), վանքի միաբանութեան և մի քանի ընտանիքների հետ 1792 թ. փախչում է Գանձակ, ուր Ջաւադ-խանը մեծ պատւով ընդունում է սրանց և Մելիք-Մեջլումի ու հայ իշխանների միջնորդութեամբ Ջաւադ-խանի հրամանով Սարգիս արքեպիսկոպոսը ձեռնադրվում է կաթողիկոս Աղուանից։

Վեց տարի Գանձակ մնալով՝ Բաղդասարը հենց այստեղ էլ 1796 թ. ձեռնադրվում է սարկաւագ Ջաւադ խանի խնդրով էլ, որ զմայլած Բաղդասարի ձայնի ու երգով՝ միշտ յաճախում էր հայոց եկեղեցին, 1798 թ. իր հօրեղբայրը՝ Սարգիս կաթողիկոսը ձեռնադրում է նրան քսաներկու տարեկան հասակում վարդապետ։

Ռուսների Գանձակ ու Ղարաբաղ գալու լուրերը լսելով, Բաղդասարի հայր իշխան Դանիէլ-բէգը վերադառնում է Գանձասար՝ կալուածքն ու հարստութիւնը կարգի բերելու, բայց ընկնելով Իբրահիմ-խանի ձեռքը և անլսելի տանջանքներ ստանալով նրանից՝ սպանվում է։

Սարգիս կաթողիկոսը, ենթադրելով որ փոթորկի յորձանքը կարող է և իրանց էլ հասնել, մանաւանդ որ Ջաւադ-խանը բաւականին թուլացել էր, անցնում է Թիֆլիս՝ Բաղդասար վարդապետի և իշխանների հետ։ Մեծ պատւով ընդունվում է վրաց Հերակլ թագաւորից։ Բայց կարճ ժամանակից յետոյ Հերակլ թագաւորը մեռնում է, սակայն կտակելով իր գահաժառանգ Գէորգիին խնամք տանելու իրան ապաւինածներին։ Եւ Գէորգի թագաւորը սրբութեամբ կատարում է հօր կտակը՝ Էջմիածնի Մայր Աթոռի գահակալ ամենայն հայոց Ղուկաս կաթողիկոսին խնդրելով Հաղբատի առաջնորդութիւնը տալ Աղուանից կաթողիկոս Սարգիս արքեպիսկոպոսին։ Թէև սկզբում շատ [illegible] մերժվում է Գէորգի թագաւորի միջնորդութիւնը, բայց ի վերջոյ կատարվում է, երբ Սարգիս կաթողիկոսը գնում է Էջմիածին։ Ահա այստեղ Ղուկաս կաթողիկոսը լսում է և նրա եղբօրորդի Բաղդասար վարդապետի սքանչելի ժամասացութիւնը և, հակառակ իր սովորութեան, տաճարում մնում մինչև ժամասացութեան վերջանալը և հէնց այնտեղ էլ պարգևատրում ու գցում է Բաղդասար վարդապետի վրա մետաքսեայ շատ թանգագին ծաղկեայ փիլոն և պատուիրում Սարգիս կաթողիկոսին շնորհել նրան ծայրագոյն վարդապետի աստիճան, որ և ստանում է Բաղդասար վարդապետը Հաղբատում 1802 թ.։

Իբրահիմ-խանի սպանվելուց յետոյ Բաղդասար ծ. վ.-ը մի քանի մելիքների հետ վերադառնում է Գանձասար 1808 թ. յուլիսին։ Վրաստանի ռուսաց զօրքի հրամանատար իշխան Օրբէլիանին հրամայում է Ալէքսէև Ղարաբաղի կառավարչին շուքով ընդունել Բաղդասար ծ. վ.-ին և իշխան Գրիգոր Հասան-Ջալալեանցին ու տալ նրանց ճանապարհին երկու կոզակ։

Բաղդասար ծ. վ. հայրենի երկիրը գտնում է աւեր։ Վանքը կիսակործան, դռները այրված, կալուածները զանազան բէգերից յափշտակված։ Սակայն անվհատ ձեռնարկում է վերաշինութեան և ամեն ճիգ թափելով, չորս տարի բէգերի հետ վէճ տանելով, յաղթանակում է։ Ղարաբաղի Մեհտի-Ղուլի-խանի հետ բարեկամանում է և նրա օգնութեամբ ցաք ու ցրիւ ժողովուրդը հաւաքում, ամայի երկիրը նորից շէնացնում ու պայծառացնում։ Ապա հօրեղբօրը՝ Սարգիս կաթողիկոսին հրաւիրում է հայրենիք, որը տասը տարի Հաղբատում մնալուց յետոյ, գաղթած իշխաններով վերադառնում է 1812 թ. Գանձասար և իբրև կաթողիկոս Աղուանից՝ բազմում իր գահին։

Էջմիածնի Մայր Աթոռի գահակալը, սակայն, այլ ևս չէ ընդունում Աղուանից կաթողիկոսութիւնը և, ռուս կառավարութեան աջակցութեամբ, խլում է նրանից կաթողիկոսական տիտղոսը, փոխարէնը տալով միտրոպոլիտութեան տիտղոսը, ճանաչելով նրան իբրև սոսկ արքեպիսկոպոս։ Սրանով վերջանում է նոյն իսկ I դարում Թադէոս առաքեալի աշակերտ Եղիշէի ձեռքով հիմնված Աղուանից կաթողիկոսութիւնը։

Սարգիս միտրոպոլիտը Բաղդասար ծ. վ. իր եղբօրորդուն ուղարկում է Էջմիածին, ուր նա 1820 թ. սեպտ. 18-ին ձեռնադրվում է եպիսկոպոս և առժամանակ մնում այնտեղ։ Վերադառնալով Գանձասար, հօրեղբօրը գտնում է արդէն ուժասպառ ծերացած, փոխարինում է նրան, կատարելով յանձնարարութիւնները։ 1828 թ. վախճանվում է Սարգիս միտրոպոլիտը, և Արցախի ու Աղուանքի մելիքները, ժողովուրդը Եփրեմ կաթողիկոսին խնդրում են Բաղդասար եպիսկոպոսին միտրոպոլիտ նշանակել, որը և կատար է ածվում 1830 թ. Էջմիածնում։

Բաղդասար միտրոպոլիտը, վերադառնալով Գանձասար, նախ ճանապարհն է սկսում իր ծախսով հարթել, ապա վանքը և կաթողիկոսարանը վերաշինել։ Արցախի և Աղուանքի ժողովրդի համար Գանձասարը ոչ միայն ուխտատեղի է, այլ և վերին դատարան։ Ապա շրջակայ վանքերն է կարգի բերում, ընդարձակում իր իշխանութեան սահմանները, աւելի քան 30,000 դեսեատին վարելահողեր և անտառներ, իր սեփական [illegible] 150 հոգի ընծայում է Գանձասարին և նրանց բնակեցնում նոյն անունով գիւղում։ Կառուցանում է երկյարկանի առաջնորդարան և սենեակներ միաբանութեան համար։

1836 թ. Պօլօժենիան հաստատվելուց յետոյ, Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսից կանչվում է Էջմիածին, երդուեցվում և ուղարկվում Շուշի, իբրև թեմական առաջնորդ Արցախի։

Գործերը կարգադրելով Գանձասարում, թողնում է միաբանութիւնը այնտեղ և 1837 թ. վերջնականապէս տեղափոխվում Շուշի։

Շնորհիւ իր վեհանձն բնաւորութեան և կենցաղի, շատ շուտով գրաւում է տեղւոյն մեծամեծների, ժողովրդի և պետական պաշտօնեաների սէրն ու յարգանքը։ Չը խնա-

ՊԱՊՕՎԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԻ ՄԱՀԸ

Մոսկվա, 28 յուլիսի

Ամսիս 23-ին հողին յանձնվեց Յ. ք. Պապօվեանի մարմինը, որը երկարատև հիւանդութիւնից յետոյ ամսիս 19-ին կնքել էր իր մահկանացուն ծերութեան հասակում։ Հանգուցեալ Պապօվեանը, բնիկ ատրպատականցի, 45 տարի շարունակ քահանայագործել է Մոսկվայում։ Չը նայած այդ հանգամանքին, նա չէ վայելել հասարակութեան լայն խաւերի համակրանքը, և հէնց այդ էր պատճառը, որ թաղումը անցաւ անշուք, փոքրաթիւ հասարակութեան ներկայութեամբ։ Չը կար այն սրտաբուղխ վերաբերմունքը, ինչ տեղի ունեցաւ անցեալ տարի Էմմանուէլ ք. Նազարեանի թաղման ժամանակ, որի մահը կրում էր լայն, հասարակական բնոյթ, որի կորուստը ողբացին զանազան խաւերից։ Պապօվեանի դագաղի վրա խօսեց Թէմիս առաջնորդը։ Դրըված էին մի քանի պսակներ բարեկամների կողմից։ Հանգուցեալը տասնեակ տարիներ եղել է կրօնուսոյց Լազարեան ճեմարանում, որից նրա այրին ստանալու է կենսաթոշակ ցմահ։ Իր մահից յետոյ մնում են 5 զաւակներ։ Ռուս լրագիրների ասելով՝ մնում է 200,000-ի կարողութիւն, մի գումար, որ և ոչ մէկը կը կարողանար քահանայագործութեամբ դիզել։

Պապօվեան քահանայի մահով հոգևոր կառավարութեան գործերը միանգամայն մնում են երեսի վրա ընկած։ Քահանայական հարցի լուծումը աւելի ստիպողական է դառնում։ Չը նայած դրան՝ իշխան Աբամելիք-Լազարեանի քմահաճոյքների պատճառով երկար ժամանակ է, ինչ տուժում են Մոսկվայի և Պետերբուրգի հայ գաղութները։ Հայ եկեղեցու հիմնական սկզբունքների դէմ նրա ոտնձգութիւնների պատճառով յամառ պայքար է սկսվել տեղիս ազդեցիկ շրջանների, հասարակութեան մեծամասնութեան և [illegible] կոչից՝ Արսէն սարկաւագի ընտրութեան համար։ Այդ առիթով մի այլ անգամ։

Գաւ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Էջմիածնից ստացանք մի նամակ, որ կը տպենք յաջորդ համարում, և որ հաղորդում է, թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հնարաւորութիւն չէ գտել յարգել Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի միջնորդութիւնը՝ հաստատել իր նախագահութեամբ կազմված յօբելեանական յանձնաժողովը, ինչպէս և գրական ֆօնդի հանգանակութեան համար թոյլտւութիւն խնդրելը, այլ առաջարկել է Մեսրոպ եպիսկոպոսին նորից աշխատել միացնել երկու յօբելեանական յանձնաժողովները և միացեալ ոյժերով ձեռնարկել հանգանակութեան միմիայն յօգուտ դպրոցական ֆօնդի։ Նոյն նամակի մէջ հաղորդվում է նաև, որ սինօդը՝ դիմած լինելով ներքին գործերի մինիստրութեան՝ խնդրանօք թոյլ տալ ընդունել բագուեցի Կարապետ Լալայեանից 40,000 ր. յօգուտ Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան (դրամագլուխը պէտք է պահվէր սինօդում, իսկ տոկոսիքը տրվէր Կուլտուրական Միութեան, համաձայն ցանկութեան նուիրատու Լալայեանի), մինիստրութիւնը մերժել է, առարկելով որ Կուլտ. Միութիւնը մի մասնաւոր ընկերութիւն է, որ ոչ մի կապ չունի հայոց եկեղեցու հետ։ Այժմ Կ. Լալայեան տրամադիր է նուիրել յօգուտ դպրոցական ֆօնդի այդ 40,000 ր., որպէսզի նրա տոկոսները տրվեն հայոց եկեղեց.-ծխ. չքաւոր դպրոցներին։ Անկասկած, գովելի է Կ. Լալայեանի այս դիտաւորութիւնը։

◆ Օգոստոսի 2-ին Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել է դատաստանական պահանջ յարուցանել Պարիզի Էյնար բանկի դէմ, որը, քաղաքային 4-րդ օբլիգացիօն փոխառութիւնը կազմակերպելով, ստանում է քաղաքից տարեկան 210,000 ր. կուպօնների վճարման և տիրաժ դուրս եկած օբլիգացիաների համար։ Այդ փողերը պայմանագրի համաձայն պէտք է Թիֆլիս քաղաքի յատուկ ընթացիկ հաշւով պահվի և նրանց մի մասի տոկոսը նրան յատկացվի։ Էյնար բանկը, չը նայելով վարչութեան պահանջներին, մինչև այժմ այդ ընթացիկ հաշիւը չէ բացել, տոկոսները չէ ուղարկել և նոյնիսկ խուսափում է պատասխանել։ Առաջարկված է քաղաքային իւրիսկօնսուլտին դատ բանալ։ Պայմանագրով՝ դատը պէտք է քննվի Թիֆլիսում։

◆ Կովկասեան մալեարիային կօմիտէտի տեղեկատու բիւրօյի անդամ է հրաւիրված Թիֆլիս Միքայէլեան հիւանդանոցի պրօզեկտոր Գամբուրգէրը։ Բիւրօն գտնվում է նոյն հիւանդանոցին կից։

◆ Վէրայի քաղաքային այգուն սեփական ջուր մատակարարելու նպատակով քաղաքային վարչութիւնը յատկացրել է 6000 ր. Այգին ջրելու համար ջուրը Կուր գետից ջրհան մեքենայով կը խփեն ափում գտնվող աւազանը, իսկ այստեղից էլ էլեքտրական-ջրմուղով այգու ամենաբարձր կէտում շինված ջրամբարը, որտեղից և խողովակներով կը տարվի այգու զանազան մասերը։ Մինչև այժմ այգին օգտվում էր քաղաքային ջրմուղի ջրով, որը, ինչպէս յայտնի է, խմելու էլ չէ բաւում։

◆ Օգոստոսի 22—25-ը Կիէվում բացվում է հրդեհաշէջների համառուսական համագումար։ Համագումարին մասնակցելու է նաև Թիֆլիսի հրդեհաշէջների կառավարիչ Կալմըկօվը, որի համար քաղաքը յատկացրել է 100 ր.։ Վարչութիւնը յանձնարարել է Կալմըկօվին համագումարում հարց զարթեցնել ապահովագրական ընկերութիւնների վրա իւրաքանչիւր ապահովագրական պօլիսի համար 25-ական կոպէկ տուրք նշանակելու յօգուտ քաղաքաքներին։ Կալմըկօվը պէտք է պարզի նաև համագումարի անդամների կարծիքը հրդեհաշէջ ձիակառքերի փոխարէն աւտոմօբիլները գործածելու խնդիրը։

◆ Օգոստոսի 3-ի առաւօտեան ժամը 8-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամի պաշտօնակատար Մ. Ա. Զաքարը, կանչելով գլխաւոր կօնտրօլեօրին և գլխաւոր հաշուապահին՝ անակնկալ ստուգութեան ենթարկեց քաղաքային դրամարկղը։ Ամեն ինչ գտաւ կարգին։ Առ ձեռն դրամ կար 19,276 ր. 57 կ., տոկոսաբեր թղթեր՝ 1,447,395 ր. (որից 1,226,075 ր. պետական բանկում, 293,120 ր. ներմուծատոմսեր և 28,200 ր. տոկոսաբեր թղթեր գանձարկղում)։ Զանազան ընթացիկ հաշիւներով կայ 240,383 ր. 57 կ.։ Տոկոսաբեր թղթերի գումարներից՝ 148,050 ր. գրաւդնողներինն է և 1,299,045 ր. յատուկ դրամագլուխները։ Ընթացիկ հաշւով եղած գումարներից 41,028 ր. 31 կ. պատկանում է քաղաքային ծառայողների փոխատու-խնայողական դրամարկղին, իսկ 16,789 ր. 80 կ. պահեստի դրամագլխինը։

◆ Մեզ խնդրում են տպել, որ ժողովրդական Տանը գործող հայկական դրամատիկական խմբակցութեան վարչութիւնը խնդրում է այն թատերասէր անձանց, որոնք կամենում են մասնակցել ժողովրդական ներկայացումներին, իբրև սիրողներ և սիրողուհիներ, դիմեն վարչութեան անդամ Մ. Ստամբոլցեանին խմբակցութեան գրասենեակում, Պասկևիչա փող. № 1, ամեն առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը։

◆ Երէկ, օգոստոսի 5-ին, ցերեկվայ ժամը 1-ին, հրդեհ ծագեց 8-րդ քաղաքամասի Կուվշիննայա նրբափողոցում գտնվող Բարսկիի երկյարկանի տանը։ Հրդեհաշէջները ժամանակին օգնութեան հասան, բայց որովհետև տունը գտնվում է քարափի վրա, ուստի հանգցնելը մեծ դժուարութիւնների էր հանդիպում, մանաւանդ ջրի մատակարարութեան տեսակէտից։ Տունը ամբողջապէս այրվեց։ Յիշեալ տանը ապրող 4 բնակարանատէրեր մնացին անօթեան. իրերի մեծ մասը անկարելի եղաւ ազատել։ Տունը ապահովագրված է։ Հրդեհ ծագելու պատճառը առ այժմ յայտնի չէ։

◆ Անցեալ յուլիս ամսի 25-ին Բէլինսկայա փողոցի վրա № 13 տանը գտնվող Մօիսէյ Փուրցէլաշվիլիի «Գէմօ» կվասի գործարանից 3 շիշ կվաս ուղարկվեց քաղ. լաբօրատօրիան քննութեան համար։ Քննութիւնը ցոյց տուեց, որ այդ կվասը անպէտք է խմելու համար։ Փուրցէլաշվիլին պատասխանատուութեան է ենթարկվում։

◆ 1910 թ. Թիֆլիսում կազմակերպված ֆրանսիական ըմբշամարտութեան մասնակցող ուսանող Սէվանօվը նորերս քննութիւն է տուել Գաբէր-Վլինսկիի Մոսկվայի օդաթռիչքային դպրոցում և պիլօտի (օդաչափ) կոչումն ստացել։ Այստեղ Սէվանօվը մտադիր է թռիչքներ կազմակերպել Ֆարմանի սիստեմի աէրօպլան ձեռք բերելուց յետոյ։

◆ Քաղաքային վարչութիւնը առաջարկել է Վէրայի քաղաքային այգու բուֆէտատիրոջը՝ փակել բուֆէտին կից եղած առանձնասենեակները։

◆ Քաղաքային լողարանը վերանորոգվում է և ամրացվում, այնպէս որ մի քանի օրից յետոյ կը վերաբացվի դարձեալ։

◆ Օգոստոսի 7-ին Պետերբուրգ գնացող քաղաքային դումայի ձայնաւոր Ա. Բարօվը միջնորդութիւն է յարուցելու Թիֆլիսում պօլիտեխնիկական դասընթացներ բանալու թոյլտւութիւն ստանալու համար։

◆ Երկրագործութեան մասին կովկասեան լիազօրի կարգադրութեամբ Կովկասի տնայնագործական կօմիտէտի հրահանգիչ Ա. Շահմազեանը ուղարկվում է Բորչալուի, Սղնախի և Թելաւի գաւառները՝ տեղական տնային գործուածքների ժամանակակից դրութիւնը և տնայնագործների կարիքները ուսումնասիրելու համար։

◆ Ալէքսանդրօպոլից մեզ գրում են հետևեալը. «Ալ. Քալանթար, գալով մեր քաղաքը, կարդաց դարձեալ երկու դասախօսութիւն ամառային գիւղատնտեսական կուրսերում։ Դասախօսութեան առարկան էր մեր երկրի զանազան տեսակ կենդանաբուծական գրգռմունքների համեմատութիւնը և տնտեսական գնահատութիւնը։ Ընդամենը ներկայ ամառ նա կարդացել է ինն դասախօսութիւն։ Ալէքսանդրօպոլ է եկել նաև Յ. Փիրումեան՝ կարդալու կուրսերում դասախօսութիւններ խոտաբուծութեան մասին։ Թռչնաբուծութեան դասերը վերջացան, և շուտով կը վերջանան գործնական պարապմունքները։ Դասընթացքների կառավարիչ Խ. Դիլանեան ամեն օր զբաղված է տեսական և գործնական ցուցմունքներով կաթնատնտեսութիւնից։ Դասընթացքներում ուսանում են քսան ունկնդիր։ Դասընթացքները կը վերջանան օգոստոսի 15-ին մի էկսկուրսիայով, որ կանեն ուսանողները դէպի Կարս, որտեղ բացվում է Կենդանաբուծական ցուցահանդէս»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 31 յուլիսի

Կարդացինք «Մշակի» № 165-ում Իրադեկի «Անմխիթար երևոյթ» վերնագրով յօդուածը, իսկ «Հորիզոնի» № 169-ում Վազինակ. Զարգարեանի նամակը։ Վերջինս փորձում է ջրել Իրադեկի ասածները, չիմանալով որ վերջ ի վերջոյ ճշմարտութիւնը հանդէս կը գայ։ Մենք, երկու ականատեսներս և ոստիկանական արձանագրութեան մէջ (Երկանեան Վահէի կողմից) յիշված վկաներս կրկնում ենք պ. Իրադեկի ասածները մի առ մի՝ դէպքի վերաբերմամբ։

Իսկ ինչ վերաբերում է Զարգարեանի ասածներին, մենք, մի կողմը թողնելով երկրորդականը, առարկում ենք նրա հետևեալ գլխաւոր կէտերի դէմ։

1) Վ. Զարգարեանը գրում է՝ Խ.-ն «հանքով խփեց նրան»։ Զարմանալի՜ աչքե՛ր. տեսնել որ արիւնը ծորում է ծեծվողի աչքից, տեսնել որ դէպքը կատարվելուց յետոյ մի շաբաթ աւելի աչքի կապտածը չէ անցնում. և դեռ այդ կատակի տե՞ղ ընդունել։

2) Որ «խմբակ» եղել է, այդ ևս ճիշդ է, քանի որ Խուբեանի ընկերները շատ ձեռնպահ գտնվեցին և իսկապէս հրճուում էին, ինչպէս Իրադեկն է ասում, իսկ երբ մենք հեռանում էինք նրանցից, լսեցինք հետևեալ խօսքերը. «Կեցցես, Խուբօ ջան, ինչպէս ասիր, այնպէս էլ կատարեցիր»։

3) Երկանեան Վահէն նոյնութեամբ չէ պատասխանում իրան խփողին՝ Ս. Խուբեանին։

4) Ապացուցելու համար, որ Իրադեկը չափազանցութեան չէ դիմել, այլ ընդհակառակը բաց է թողել դեռ շատ մանրամասնութիւններ և շատ ցաւալի կէտեր, մենք յիշատակում ենք հետևեալը, որպէսզի մեր ասածները փաստացի լինեն։

Սարգիս Խուբեանի խօսելու ձևը, շարժումները, դէմքի արտայայտութիւնը այն աստիճան տգեղ էին և ոչ կուլտուրական մարդուն վայել, որ Թաղային վերահսկիչը տեսնելով թէ ում հետ գործ ունի՝ իր նողկանքը յայտնեց և գոռաց. «Отайди, отъ моего стола, дубина, ты этокій».

Ահա թէ ինչ կը նշանակի ճշմարտութիւնն ոտնակոխ անել և մեղանչել խղճի առաջ, պ. Զարգարեան։

Վկաներ՝ Յարութիւն Խաչատրեան
Գրիգոր Խալաթեան

—

Նուխի, 26 յուլիսի

«Մշակի» № 157-ում Նուխուց Ն. Մանուչարեանցը «Դպրոցական ֆօնդի արձագանքը» վերտառութիւնը կրող մի յօդուածով կամենում է համոզել ընթերցող հասարակութեան, որ գործը «մատնված է դատապարտելի անտարբերութեան» և «հոգևոր իշխանութեան ուշադրութիւնն է հրաւիրում» տալով մի շարք խորհուրդներ։

Հանգանակութեան գործի լիակատար հաշւետուութիւնը թողնելով գործի փակման ժամին, համբերովանդակութիւն կրող աչառու թղթակցութիւնների առաջն առնելու համար ստիպված ենք տալու գործի այժմեան պատկերը։

Հանգանակութեան գործի բացման օրերում վիճակիս փոխանորդ Եղիշէ վ. եկեղեցում խօսելով՝ առաջարկեց հասարակութեանը ժողովվել և խորհրդակցել հանգանակութեան գործը որոշ հիմքերի վրա դնելու համար։ Ամեն մի անհատ այդ առիթով նկատելի նուիրաբերութիւններ անելիս՝ դէպքը նիւթ դարձրած խօսվում է եկեղեցում։ Տեղիս դպրոցական, նոյնպէս և Կ. Հ. Բ. Ը. տեղիս ճիւղի վարչութիւնները տուել են ուրոյն ներկացումներ և մուտքերը ուղարկել ըստ պատկանելոյն։ Դպրոցի վարչութիւնը տուել է հանդէս։ Կառավարութիւնս թւով 48 թերթիկներ է ուղղել քաղաքիս եկեղեցիներին, Կ. Հ. Բ. Ը. տեղիս ճիւղի վարչութեանը, դպրոցական, բոլոր բանկային հաստատութիւններին, այլ և մասնաւոր առևտրական տներին, ազդեցիկ անձանց, իսկ գիւղերում գործակալներին, հոգաբարձուներին և քահանաներին։

Մի առ մի չը յիշատակելով մասնաւոր անձանց իրանց մեռելների յիշատակին այդ նպատակին նուիրաբերած 10-ական, 20-ական րուբլիներով արված նուէրները, հանգանակութեան այդ 48 թերթերից ցայսօր յետ են դարձրել 18 թերթեր՝ 200 ր. 10 կ. գումարով։ Երբ կը ստացուին մնացեալ 30 թերթերը իրանց գումարներով, այլ և կը ժողովվեն մասնաւոր անձանց նուիրատուութիւնները, կը տրվի մանրամասն հաշիւ։

Սակայն թերթերից և ոչ մէկի մէջ չը կայ «Ն. Մանուչարեանց» ստորագրութիւնը, ինչպէս ինքն է ասում, «գոնէ 10 կոպէկ նուիրատուութեամբ»։

Այս բոլորից երևում է, որ Ն. Մանուչարեանցը իր յօդուածը գրել է առանց գործին մօտիկից ծանօթանալու, կարծելով թէ հանգանակութեան գործը սահմանափակվում է «եկեղեցու թասախ մօտ դրված հանգանակութեան թերթով»։

Գաւառի խուլ անկիւններից առանց այն էլ շատ քչերն են ձեռնհաս կամ շատ քչերն են գրում թերթերին։ Գաւառական թղթակիցը խիստ ծանր դեր ունի ստանձնած. նա է և՛ դէպքն ու երևոյթը գրչի առած պատմողը, և՛ այդ դէպքերի ու երևոյթների սկզբնապատճառները անալիզի ենթարկողը, և՛ յաճախ, ինչպէս Ն. Մանուչարեանն է արել, խորհուրդներ տուողը։ Ուստի գաւառական թղթակիցը պիտի խնայի նախ՝ թերթի [illegible] էջերը, երկրորդ՝ պիտի ակնածութեամբ գնահատի իր գրագիտութիւնը և երրորդ՝ միշտ պիտի ջանայ բնաւ չելնել բարեխղճութեան սահմաններից։

Անդամ կառավարութեան՝
Արշակ քահ. Փալչեան
Անդամ և պաշտ. քարտուղար՝
Սահակ քահ. Տէր-Պօղոսեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Սենատը յարգել է Ասրիեանի բողոքը «Դաշնակցութեան» Գանձակի անդամների գործի առիթով։ Պօպօվի, Տասալօվի, Ալլահվերդեանի և Բալայէվի բողոքները թողել է անհետևանք։

◆ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրի հաւաքած տեղեկութիւնների համաձայն յուլիսի առաջին կիսում Ռուսաստանում գործադուլարարների թիւը հասնում էր 100,000 հոգու, որից միայն 47,000-ը Լօձի շրջանում։ Լօձից յետոյ երկրորդ տեղը բռնում է Պետերբուրգը 12,000-ից աւելի գործադուլարարներով, ապա Մոսկվան։ Առաջնութեան պատիւը երկրորդ կիսամսում երևի կանցնի Բագուի շրջանին։

◆ Բագուի նաւթարդիւնաբերողների խորհրդակցութիւնը համաձայնվել է գոհացում տալ բանւորութեան տնտեսական և սանիտարական-առողջապահական պահանջներին միայն։ Գործադուլին յարել է բանւորութեան $90^{0}/_{0}$-ը։

◆ Պետական Դումայի անդամներ Չխեիձէն և Սկօբելէվը ներկայացրել են բողոք Բագուի քաղաքապետին գործադուլարարներին կալանաւորելու և առհասարակ ադմինիստրացիայի վերաբերմունքի առիթով։

◆ Ժընէվից ստացված հեռագրի համաձայն, տաժանակիր աշխատանքներից փախած երկրորդ Պետական Դումայի անդամ Զուրաբեանը գնացել է արտասահման։

◆ Նկատի ունենելով բանւորական շարժման տևականութիւնը նաւթահանքերում, Ռուսաստանի երկաթուղիների մի խումբ Վլադիկավկազինի նախաձեռնութեամբ միջնորդել է ֆինանսների մինիստրի առաջ, որպէսզի թոյլատրվի կրիզիսի ամբողջ ժամանակը անմաքս ներմուծելու Ռուսաստան ռումինական նաւթը։

◆ Պետերբուրգում «Էրմիտաժ» հիւրանոցում կալանաւորված է իրան խոշոր նաւթարդիւնաբերող անուանող Արշակ Մուշանցը։ Նրա մօտից վերցրել են անցագիրն ու դոկումենտները։ Մուշանցի վրա կասկած կայ, որ նա պատկանում է սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեանը։

◆ «Рус. Молва»-ն հաղորդում է, որ Պետերբուրգի շվէյցարների 20 տոկոսից աւելին գաղտնի ոստիկանութեան գործակալներ են և ստանում են դրա համար ռոճիկ։

◆ Խարկովի քաղաքային ինքնավարութիւնը նիւթական ծանր ճգնաժամի մէջ է ներկայումս։ Քաղաքային բոլոր աշխատանքները դադարեցրած են։

◆ Ադրիանուպօլսի առիթով թիւրքական պատգամաւորութեանը տեղեկացրել են, որ Պետերբուրգում նրան չեն ընդունի։

◆ Բերլինում լուր է պտտվում, որ Վիլհէլմ կայսրը մօտ օրերս անձամբ կը միջամտի Ադրիանուպօլսի հարցին և կը լուծի նրան Բօլգարիայի համար ընդունելի մտքով։ Դա վերագրում են այն դիմումին, որ արել է նորերս սուլթանը։

◆ Սուլթանը նամակ է գրել Լօնդօնում գտնվող Քեամիլ փաշային՝ խնդրելով դիմել Էդուարդ Գրէյին, որպէսզի Անգլիան աջակցութիւն ցոյց տայ Թիւրքիային Թրակիայի հարցում։ Նոյնպիսի մի նամակ էլ Քեամիլ փաշայի միջոցով ուղղել է անգլիական Գէորգ թագաւորին։

◆ Գերմանիան և Իտալիան պահանջել են Աւստրիայից հրաժարվել Բուխարէստի դաշնագիրը վերաքննելու պահանջից։ Աւստրիական մամուլը յարձակում է սկսել կոմս Բերխտօլդի դէմ, համարելով նրան մեղաւոր աւստրիական դիպլօմատիայի պարտութեան Բուխարէստի դաշնագրի հարցում։ Սպասում են, որ նա հրաժարական կը տայ, մանաւանդ որ շատ դժգոհ է կայսրը ևս։

◆ «Рѣчь» լրագրին հեռագրում են Հռոմից, որ արժանահաւատ աղբիւրից հաղորդում են ալբանական իշխանի ընտրութեան առիթով, թէ մինչև այժմ ոչ մի որոշում դեռ ևս չի կայացել. շվէդական թագաւորը հրաժարվել է մատնանիշ անել իր որդիներից որևէ մէկին որպէս թեկնածու Ալբանիայի գահի համար։

◆ Թէհրանում ժանդարմները երթևեկողներից խլում են զէնքերը։ Կալանաւորութիւններ են կատարված մուջահիդների, հայերի և կովկասեան թուրքերի այն շրջաններում, որոնք նկատված են իբրև դրամաշորթներ և կողոպուտների մասնակցողներ։

◆ Բեբելի աճիւնի այրումը տեղի կունենայ կիրակի օրը։ Մինչ այդ՝ եւրոպական բոլոր պարլամենտների սօցիալիստական ֆրակցիաների կողմից կը գան պատգամաւորութիւններ և յատուկ գնացքներ տասնեակ հազարաւոր բանւորներով Գերմանիայից, Բելգիայից, Ֆրանսիայից, Աւստրիայից ու Իտալիայից։ Գերմանական սօցիալիստների պարագլխի աճիւնի այրումը, ըստ երևոյթին, միջազգային հսկայական ցոյցի կերպարանք կը ստանայ։ Արդէն եկել են Լիբկնեխտը, Կաուցկին, Բերնշտէյնը և այլն։

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

3 օգոստոսի

ՍՕՖԻԱ։ [illegible] վճռել են հիմնել [illegible] Միջերկրեա [illegible] ընկերութիւնը։

«Ասնկի» լրագիրը հաղորդում է, որ կառավարութիւնը վճռել է [illegible]։

ՏԱՇԿԵՆՏ։ Դէպի [illegible] գնաց Բուխարայի էմիրը։

ՍԱՄԱՐԱ։ Նիկօլաևսկի գաւառում [illegible] և կարկուտը փչացրել են 4210 դեսեատին [illegible]։ Վնասները հասնում են մօտ 275,000 րուբլու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Արգելք է դրված «Северная Правда»-ի № 3-ի, «Русская Молва»-ի № 280-ի և «Рѣчь»-ի № 209-ի վրայ։

ԲԱԼՏԱ։ [illegible] գիւղի մօտիկ այրուել են Տրեպլէի և [illegible] գործարանները։ Վնասը 300,000 րուբլից աւելի է։

ԼԷՅՊՑԻԳ։ [illegible]

ԼՈՆԴՈՆ։ Սկսվեց հիդրոպլանների մրցութիւնը։ [illegible] պիտի կատարեն Անգլիայի շուրջը միայն ծովով [illegible]։ Մրցանակը 5000 ֆունտ, [illegible] «Դէյլի-Մէյլը» [illegible] երկու օդաչու՝ Սօպվիթը և Մակկլինը, [illegible] 72 ժամից։ Սօպվիթը իր [illegible] Մակկլինը կը

յելով ոչ մի ջանք և նիւթական զոհաբերութիւն, Մեհտի-Ղուլի-խանի աղջկանից և ուրիշ բէգերից խլում է իր իշխանական կալուածքները, որ ընդհանուր առմամբ «Դուախու Քեալբաջար» է կոչվում և որը տարածվում է 140,000 դեսեատին մի շարք գիւղեր, կուսական անտառներ, հանքեր, վարելահողեր, մարգեր, արօտատեղեր, լի հանքային զանազան ջրերով։

1840 թ. իր սեփական ծախքով Շուշում կառուցանում է եռայարկ հոյակապ առաջնորդարան, պարսպապատ պարտէզով։ Այս շինութիւնն աւարտում է 1843 թ.։

Ահա և հոգևոր ճեմարանը (հոգևորական շկօլը) բացված ու Բաղդասար միտրոպօլիտը իրան ժառանգ է համարում այդ լուսաւոր փարոսը Ղարաբաղի և կտակում նրան իր իշխանական միլիօն րուբլիներ արժեցող կալուածքները։ Ամարասում ընդարձակ այգի է գցում և արդիւնքը նոյնպէս յատկացնում հոգևորական շկօլին։ Ժողովրդից ստացվող տուրքերը, իրան մատուցվող աջահամբոյրները, բոլորը նուիրաբերում է թեմի նորաբաց դպրոցին։ Առաջնորդարանի դիմաց ընդարձակ գետին է վերցնում եկեղեցի և դպրոցական շէնք կառուցանելու համար, սակայն այդ մտադրութիւնը դեռ չիրականացրած, հիւանդութիւնը, յոգնածութիւնը աւելի ևս սաստկանում է, և նա միայն հնարաւորութիւն է ունենում իր հիմնած տպարանը տեղափոխել իր կառուցած առաջնորդարանի շինութիւնը, Գանձասարի գեղեցկաշէն գմբէթի կտուրը հիմնովին նորոգել։ Վախճանվում է 1854 թ. յունիսի 27-ին 80-ամեայ հասակում։ Ամբողջ Ղարաբաղը խորասուզվում է վշտի մէջ։ Շուշեցիների և գանձասարցիների մէջ վէճ է սկսվում մարմինը ուր ամփոփելու համար։ Ութ օր նշխարները եկեղեցական ծափօրով քաղաքի բոլոր եկեղեցիներն են պտտեցնում, ուր վերջին հրաժեշտի որդիական աջահամբոյր են տալիս ամբողջ քաղաքի մեծ ու փոքրը։ Համաձայն կտակի, շուշեցիք զիջանում են աճիւնը գանձասարցիներին և Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեան Արցախի համայն հոգևորականութեամբ շրջապատված, Շուշու հայոց բոլոր, նոյնիսկ ռուսաց, եկեղեցիներում հանդիսաւոր պատարագներ անելուց յետոյ, արքայավայել շուքով նշխարները փոխադրում է Գանձասար։ Շուշում ամբողջ ազգաբնակութիւնը — հայ, թուրք, ռուս — ներկայ է լինում յուղարկաւորութեան։ Զօրքը զինւորական պատիւներ է անում։ Հարիւրաւոր ձիաւորներ, Ղարաբաղի բոլոր մելիքները, իշխանները, բէգերը, ժողովուրդը, գիւղացիները մասնակցում են յուղարկաւորութեան։ Ճանապարհին դագաղի առաջ հարիւրաւոր ոչխարներ է մորթում ժողովուրդը։ Թէ Շուշում, ճանապարհին և թէ Գանձասարում փառաւոր սեղաններ են բացվում յուղարկաւորների և ժողովրդի համար։

Գանձասարում հանդիսաւոր պատարագից յետոյ նշխարները ամփոփվում են վանքի հոյակապ գաւթում, իր հօրեղբայրների՝ Յովհաննէս կաթողիկոսի և Սարգիս միտրոպօլիտի գերեզմանների կողքին։

Մարմարին շիրիմի վրա փորագրված է՝

Այս է տապան Միտրոպօլիտին
Բաղդասարայ Մեծի Արհին
Կայսերապատիւ հովուապետին
Տանս Աղուանից Հայոց Ազգին,
Յազգէ Ջալալ Մեծ Իշխանին
Տեառն Արցախական աշխարհին։
Թուին ՌՅԳ. 1584 յուլիս 9.

(«Տարազ») Տ.

սկսի իր թռիչքը երկուշաբթի օր։ Սուֆրաժիստուհիների պարագլուխ Պանկհըրստը ուղևորվեց Ֆրանսիա։

ԿԻԵՎ։ Նահանգական դատարանը Բեյլիսի գործի քննութիւնը նշանակել է սեպտեմբերի 26-ին։

ՄՕՍԿՎԱ։ Այստեղ եկան քաղաքային տնտեսութեան հետ ծանօթանալու նպատակով ճապօնական պարլամենտի անդամ Սիմէթսուն և Տօկիօյի ներկայացուցիչ Ֆուկուդան։ Նրանք դիտում էին քաղաքային հիմնարկութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ի նկատի առնելով որ 1915 թւին պէտք է տեղի ունենայ երկրորդ ընդհանուր օրագիրը, ազգաբնակութեան և դրա համար բաւականաչափ գիտակ անձեր պատրաստելու անհրաժեշտութիւն կայ զանազան տեղերում աշխատելու համար, ներքին գործերի մինիստրը կարգադրել է 1913/1914 ուսումնական տարվայ սկզբից ունկդիրների թիւը ստատիստիքական դասընթացքներում աւելացնել մինչև 300 հոգու։ Ներքին գործերի մինիստրը թոյլատրել է Կիեվի ցուցահանդէսի ժամանակ, օգոստոսի 17-ից մինչև 25-ը, ձիաբոյծների համագումար հրաւիրել։

Ներքին գործերի մինիստրը շրջաբերականներով բացատրել է նահանգապետներին, թէ ինչպիսի պայմաններով կարելի է նպաստել զեմստվօներին և քաղաքային հասարակական հաստատութիւններին հակախոլերային ու հակաժանտախտային միջոցներ ձեռք առնելու համար։

4 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մամուլի վերաբերեալ գործերի կոմիտէտը արգելք դրեց «Вѣчерная Правда»-ի № 7-ի վրա։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Կիրգիզների անապատի Աշէուղէկ աւանում ժանտախտի նշաններով մեռել է մի կիրգիզ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ (*) Բացվեց էսպէրանտիստների երկրորդ համառուսական համագումարը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ֆրանսիայում ներկայումս քննութեան նիւթ է դարձել ամուրիների վրա տուրք նշանակելու նախագիծը։ Բարտիլիօնի հաւաքած ստատիստիկական տեղեկութիւնների հիման վրա, այժմ Ֆրանսիայում կան 1.350,000 ամուրիներ, 1.800,000 անզաւակ ամուսիններ, 2.650,000 ամուսիններ, որոնք մի զաւակ ունեն։ «La Racce française» ընկերութիւնը առաջարկում է օրէնսդրական ճանապարհով սահմանել իբրև չափ, որպէս զի իւրաքանչիւր ընտանիք ունենայ երեք երեխայ։ Եթէ ֆրանսիական քաղաքացու 45 տարին լրանում է, և պարտադիր երեք զաւակը նա չի ունենում, այդ դէպքում ամեն մի պակասող երեխայի համար պէտք է վճարի տարեկան 50 ֆրանկ տուրք։ Կարծում են, որ այդ տեսակ տուրքը կարող է պետութեանը տալ մօտ կէս միլիարդ ֆրանկ տարեկան եկամուտ։

◆ «Times» լրագիրը եռանդով պաշտպանում է ստորջրեայ ճանապարհ կառուցանելը Ֆրանսիայի և Անգլիայի միջև։ Լրագրի հաշւով, այդ անցքի արժողութիւնը կը կազմի 320 միլիոն ֆրանկ։ Եթէ ժամանակակից տեխնիկայի համար անյաղթելի արգելքներ պատահելու լինեն, այն ժամանակ կարելի է կամուրջ շինել Լամանշի վրայից, որ կարժենայ 440 միլիոն ֆրանկ։ Ռազմական բնաւորութիւն կրող արգելքներ չեն նախատեսվում, մանաւանդ որ օդաթռիչութեան զարգացման ներկայ օրերում Անգլիային մայր ցամաքից առանձնացնելու վերաբերմամբ խօսք էլ չի կարող լինել։

◆ Ցայտնի ֆրանսիացի բանաստեղծ Պիեր Լոտին, լրագիրների ասելով, մօտ օրերս իբրև ֆրանսիական նաւատորմի օֆիցեր գնացել է Կ. Պօլիս իր ծառայութիւնը առաջարկելու Թիւրքաց կառավարութեանը։ Լրագրական այդ լուրը այժմ ճշգվում է Պետ. Հեռագ. Գործակալութեան տուած տեղեկութեամբ։ Պիեր Լոտին հանդիսաւոր ընդունելութիւն են ցոյց տուել, որին մասնակցել են նոյնիսկ սուլթանական տան արքայազունները։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ВЪ МАЛЕНЬКУЮ СЕМЬЮ

желаютъ взять пансіонера съ подготовкой въ младшіе классы сред. учебн. завед. Тифлисъ, Сергіевская, 20, кв. 2.

(չ. կ.) 618. 2—1

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ

Վաճառվում են **Յ. Դաղբաշեանի** բառարանների

ՎԵՐՋԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

ՌՈՒՍ-ՀԱՅ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գինը 8 ր., կազմած 9 ր.։

ՀԱՅ-ՌՈՒՍ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌ., գինը 6 ր., կազմած 6 ր. 50 կ.։ Երկու բառարանները միասին 12 ր.։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։ Աշխարհաբարի քննական քերականութիւնը նոյն հեղինակի, գինը 50 կոպէկ։ Դիմել՝ А. Дагбашяну. Корганосвкая ул. № 9. кв. 2 Въ г. Тифлисъ.

(և.) 494. 10—6

Բաշտի «Մ. Ա. Յովդանանեան» ազգային երկսեռ դպրոցի համար հարկաւոր է

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ,

որ ունենայ ՑԵՆԶ և մի քանի տարվայ փորձառութիւն և որին, ի դէպս, կարելի լինի յանձնել նաև աւ.-ուսուցչի պաշտօնը։ Աւանդելի առարկան՝ թւաբանութիւնն է, շաբաթական 24—25 դաս, ռոճիկը 6—700 ր., իսկ աւագ-ուսուցչութեան դէպքում յաւելեալ 50 ր., ճանապարհածախս՝ 25 րուբլի։ Ցանկացողները պէտք է դիմեն «Մշակի» խմբագրութեան՝ պ. Հ. Առաքելեանին։

611. 3—3

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ինստիտուտաւարտ կամ գիմնազիաւարտ

վարժուհի-դաստ.-կչուհի,

ոչ պակաս քան 30 տարեկան, որը պարապելու է ու դաստիարակելու գիմնազիայի 3-րդ դասատան մի աշակերտուհու, և որին միանգամայն պէտք է առնէ իր անմիջական հսկողութեան տակ։ Բացի հիմուտ դաստիարակութիւնից պահանջվում է իմանալ ֆրանսերէնը և դաշնամուրի վրա նուագելը։ Տրվելու է ճաշ, բնակարան իր բոլոր յարմարութիւններով։ Պայմանների համար դիմել Чарджуй, М. И. Даніелянцу.

(և.ու.) 600. 3—3

ՍԿԱՎՈՒԼԻՆԸ

ԲՈՒԺՈՒՄ Է ԿԱՊՈՒԹԻՒՆԸ

Շարժումների բացակայութիւնը առաջացնում է կապութիւն, իսկ վերջինս էլ գլխացաւ, փորացաւ, կաշու հիւանդութիւններ, վատ մարսողութիւն, ստամոքսի հիւանդութիւններ։ ՍԿԱՎՈՒԼԻՆԸ, որ լուծողական է, դեղհատիկների ձևով, առանց հոտի և համի, շարժողութեան մէջ է դընում աղիքները և բուժում կապութիւնը։ Բուժում է ոչ միայն մի քանի օրով, այլ ընդմիշտ։

ՍԿԱՎՈՒԼԻՆԸ

լուծողական է—

դեղհատիկներ

առանց հոտի եւ համի



(В. 37896)

ԳԻՐՔ գիւղի համար (Բագուի նահ.) ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

որ աւանդելու է միդասեան երկսեռ դպրոցում ռուսերէն և ձեռագործ։ Ռոճիկը 420 րուբլի, բնակարան, վառելիք, լուսաւորութիւն և ծառայ։ Դիմել «Մշակի» գրասենեակին։

(և. հ. շ.) 617. 3—1

---

23 տարվայ մանկավարժական հմտութեամբ

Ուսուցչուհի

ցանկանում է ունենալ դասեր ծխական դպրոցներում ռուսերէնից, թւաբանութիւնից (ռուսերէն լեզուով), պատմութիւն և ձեռագործ։

Դիմել՝ Одесса, Княжеская, 23, кв. 8— Учительницѣ.

612. 3—3

ՈՒՐՄԻԱՑԻ (Պարսկաստան, Ատրպատականի սահանգ) հայոց դպրոցի համար հարկաւոր են 2 ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ և 1 ՎԱՐԺՈՒՀԻ։ Ուսուցիչներից մէկը, որ ռուսերէն լեզուի համար է, պէտք է կամ գիմնազիաւարտ և կամ ուսուցչական ինստիտուտ աւարտած լինի. երկրորդը, որ հայոց լեզուի և միւս առարկաների համար է, պէտք է թեմականաւարտ կամ ճեմարանաւարտ լինի։ Վարժուհին պէտք է աւարտած լինի կամ գիմնազիան, կամ Յովնանեան և Գայիանեան դպրոցները։ Ցանկալի էր, որ ուսուցիչը և վարժուհին ամուսիններ կամ եղբայր և քոյր լինէին։ Ռոճիկը առաջինի համար 800 ր., երկրորդի և երրորդի համար 600-ական ր.։ Ճանապարհածախս 40 ր.։ Ցանկացողները պէտք է դիմեն «Մշակի» խմբագրութեանը՝ պ. Հ. Առաքելեանին մանրամասն պայմանները իմանալու համար։

610. 3—3

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ I-ԻՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ ԵՐԿՍԵՌ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(XIV տարի)

Դասընթացքներում աւանդվում են իտալական կրկնակի սիստեմով հաշւապահութիւն համապատասխան արդիւնաբերութեան զանազան ճիւղերին, առևտր. թւաբանութիւն, առևտր. թղթակցութիւն, առևտր. իրաւունք, սղագրութիւն և ցանկացողներին սովրեցնում են գրող մեքենայի վրա։

Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 16-ից 1913 թ.։

Դասընթացքները տևելու են 6 ամսից ոչ պակաս։ Զբաղմունքները երեկոները՝ շաբաթական 3 անգամ։ Վճարը 40 ր. ամբողջ դասընթացքի համար։

Խնդրագրերը՝ յանուն Թիֆլիսի Առևտրական Դպրոցի վերատեսչի՝ ընդունվում են դպրոցի դիւանատանը առ. ժ. 10—1-ը։

(կ.և.հ.) 614. 12—2

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

առ 1-ն օգոստոսի 1913 թւի

I ԱԿՏԻՎ.	Ր.	Կ.
1) Դրամարկղ և ընթացիկ հաշիւները.	2.009,437	08
2) Զեղչումը մուրհակների, առևտրական պարտաթղթերի և տիրաժի արժեթղթերի.	753,384	29
3) Փոխատուութիւններ ի հաշիւ տոկոսաբեր թղթերի.	1680	—
4) Ցատուկ ընթացիկ հաշիւները (on call)	354,449	72
5) Բանկին պատկանող արժէքաւոր թղթերը.	117,010	57
6) Արտասահմանեան մուրհակները և դրամները.	11,357	25
7) Բանկի թղթակիցները.		
ա) Ըստ իրանց հաշւի	21,340	30
2) Ըստ հաշւի բանկի	294,969	61
8) Կահ և կարասիք.	1419	37
9) Վերադարձնելի ծախքերը.	41,260	30
10) Ընթացիկ ծախքերը.	11,327	08
11) Փոխանցիկ գումարները.	732	55
12) Մուրհակները յանձնարարված (incasso)	69,478	18
Գումար.	3.687,846	30

II ՊԱՍՍԻՎ.	Ր.	Կ.
1) Հիմնական դրամագլուխը (ստացված 50%)	2.500,000	—
2) Աւանդները և ընթացիկ հաշիւները.	982,666	45
3) Բանկի թղթակիցները.		
ա) Ըստ իրանց հաշւի	23,061	55
բ) Ըստ հաշւի բանկի	40,565	90
4) Տոկոսները՝ վճարելի ի հաշիւ աւանդների և ընթացիկ հաշիւների	2555	53
5) Ստացված տոկոսները և կոմիսիա.	19,705	50
6) Տոկոսները՝ ստացված ի հաշիւ 1914 թ.	1150	79
7) Վճարելի փոխանակագրերը.	5169	79
8) Փոխանցիկ գումարները.	43,492	61
9) Մուրհակները յանձնարարված (incasso)	69,478	18
Գումար.	3.687,846	30

616. 1—1

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Սպէրմին-Պէլիով օգտվող հիւանդներին աշխատում են խաբել մեծախօսում ռէկլամներով սերմային երկաթից պատրաստված հեղուկների մասին, ըստ որում այդ ռէկլամների մէջ անամօթաբար խեղաթիւրում են փաստերը և մատնացոյց են լինում եւրօպական գիտնականների անուան և աշխատութիւնների վրա, մինչդեռ այդ գիտնականները երբէք չեն տեսել այդ պրէպարատները։ Մենք մեր պարտքն ենք համարում նախազգուշացնել հիւանդներին այդ մահլամներից, որովհետև նրանք՝ չունենալով ոչ մի առնչութիւն Սպէրմին-Պէլի հետ՝ շատ անգամ պարունակում են իրանց մէջ հակաառողջական նիւթեր։

Նեվրաստենիայի, սեռական թուլութեան, զառամութեան, իստէրիկայի, նեվրալգիայի, սակաւարիւնութեան, թոքախտի, սիֆիլիսի, սնդիկային բժօկլութեան հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (շաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախումն, պէրէբոյ, միոկարդիտ), զարկերակի կարծրացումն, ալկօհօլիզմի, ողնաշարի հիւանդութեան, կարուածների, հիւանդութիւններից առաջացած թուլութեան, յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ միայն Սպէրմին-Պէլի գործածութեամբ կարելի է հասնել այն փայլուն հետեւանքներին, որոնց մասին վկայում են ամբողջ աշխարհի յայտնի գիտնականների և բժիշկների գիտութիւնները։

Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել **ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ** անուան վրա և մերժել բոլոր մահլամները և հեղուկները զանազան անուններով, որոնց անպէտքութեան մասին հրատարակված է առանձին բրօշիւր, որն ուղարկվում է ձրի՝ Սպէրմինի մասին եղած նորագոյն գրականութեան հետ միասին։

ՍՊԷՐՄԻՆ ՊԷԼԻՆ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ ԵՒ ԴԵՂԱՎԱՃԱՌԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ։

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-ья

Поставщики Двора
ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА
С.-ПЕТЕРБУРГЪ.

(П. 69718) 12—10

Թիֆլիսի Մանթաշեան Առևտրական Դպրոցում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ նշանակված են օգոստոսի 19-ից, իսկ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ օգոստոսի 26-ից։ Քննութիւնների մանրամասն ցուցակը կարելի է տեսնել դպրոցի դիւանատանը։ Դպրոցին կից կայ ԱՑԲՈՒԲԵՆԱԿԱՆ բաժանմունք։ Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր, բացի տօն օրերից, առաւօտեան ժամը 10-ից մինչև ժամը 1-ը ցերեկվայ։ Մաղթանքը և պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 2-ից։

(ու.կ.և.) 601. 4—4

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ

Նիկօլայեվսկայա, 36, Վօրօնցօվի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։

613. 50—3

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տէլէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են րէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնագրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) **Օտար լեզուներ.** 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 281 ունկնդիր, որոնցից 53 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՍԵԱՆ

(և. հ. կ.) 556. 0—12

Մեր պահեստի գեղարուեստ. բացիկների շրջանառութիւնը աւելի ընդարձակելու համար մենք ուղարկում ենք ձրիաբար մի շատ շքեղ ալբոմ գեղարուես. 300 հատ բացիկներով կամ թէ վճարում ենք ալբոմի փոխարէն,

ՏԱՍՆԵՒՀԻՆԳ ՌՈՒԲԼԻ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄ

նրան, ով ուղիղ կերպով կը վճռէ ստորև բերված խնդիրը և կը պատուիրէ մեզ մօտ 25 հատից ոչ պակաս գեղարուեստ. բացիկներ՝ ուղարկելով 85 կ., կամ թէ վերադիր վճարով՝ 95 կ.։

?

4		
	5	
		6

?

Քառակուսի 9 վանդակներում 1—9 թւանշանները պէտք է զետեղել այնպէս, որ իւրաքանչիւր ուղիղ գծի (3 վանդակի) գումարը լինի 15, և որ այդ գումարը կրկնվի, ըստ կարելւոյն, աւելի շատ անգամ։ Խնդիրը լուծելու իրաւունքը պատկանում է նրան, ով մեզ մօտ պատուիրած և վճարած ունի 25 հատ բացիկների համար։ Որովհետև իւրաքանչիւր անձ, ով ուղիղ կերպով վճռած ունի խնդիրը, ստանում է պրէմիա, հետևաբար՝ դիմում անելուց պէտք յայտնել, թէ որ պրէմիան է ցանկանում--ալբոմը թէ՞ դրամը, նոյնպէս և նամակի մէջ նշանակել, առանձին բարակ թղթի մի փոքրիկ կտորի վրա, ճշգրիտ հասցէն։

(Л. 12951) О-ВО «УНИВЕРСАЛЪ», ЛОДЗЬ С. 27. 10—4

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

(Գոյութիւն ունի 1895 թ.)

Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։ [illegible]

Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44

(կ. հ. և.) 576. 0—7

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный